

գործած էր մեր, նորեկներուս վրայ: Այդ տպաւորութիւնը կը համարձակիմ ըսելու թէ անջնջելի մնաց եւ չափազանցութիւն չպիտի ըլլար անշուշտ, եթէ ըսէի թէ մեզմէ ոմանց առաջին օրերու անհաւասար քայլերը զօրացան այդ բնաշխարհէն եկած ոգեւորիչ բանաստեղծական ազդեցութեամբը: Ռուբէն Զարդարեան ըլլալով ամէն պայմաններէ անկախօրէն, մեծապէս օժտուած գրագէտ մը, էր միանգամայն մեր գաւառի գրականութեան ամէնէն կարկառուն դէմքերէն մեկը. անիկա Խարբերդն էր, այդ բազմաչարչար եւ կորովի հայ գաւառը, անիկա Խարբերդն էր, իր տառապանքին ներքեւ հզօր եւ նոյն իսկ իր տառապանքով հզօրացած, անիկա ոգին էր մեր ամէնէն քաղցրօրէն տխուր բանաստեղծութեամբ մը օծուն հայ գաւառին որուն վշտագին բայց ժպտուն, հալածական բայց երազատես գաւակներուն ցաւի եւ ուրախութեան վանկերը, աչքերու հրայրքը, հոգիներու սարսուռները կը փոխանցէր մեզի իր գեղեցիկ եւ յանկուցիչ արուեստին միջոցաւ:

Անոր գրականութիւնը մեզի համար միշտ եղաւ գերազոյն բուրմուկքը այն ժողովուրդի հոգիին որուն մէկ հարազատ գաւակն էր ինքը եւ իր միջոցաւ հաղորդակից եղանք հեռաւոր եւ մեզի անծանօթ արինակիցներու տուայտանքներուն, պզտիկ ուրախութեանց եւ մեծ վիշտերուն, ժպիտի եւ գոհունակութեան խուսափուկ պահերուն եւ յարատեւող թշուառութեան, մէկ խօսքով անոնց ամբողջական կեանքին յուզումներուն եւ յոյսերուն:

Եւ ահա այս պատճառներով, նաեւ իր առանձնապէս ունեցած յատկութիւններուն շնորհիւ Ռուբէն Զարդարեան թրքահայ գրականութեան մեր սերունդին ամէնէն արդիւնաւոր, ամէնէն համակրելի անդրանիկներէն մէկը եղաւ:

Իր գրութիւնները, տարիներէ ի վեր ցրուած են այլ եւ այլ թերթերու եւ պարբերականներու մէջ, որոնցմէ ամէնէն յատկանշական էջերը ամփոփուած են *Տայգալոյսի*ն մեջ: Ասկէ դուրս կը մնան սակայն, կարգ մը ուրիշներու հետ, *Դէպի սէր* բանաստեղծութիւնը եւ *Եօթը երգիչները*